# Արձանագրություն 3 / Протокол 3/

## Վանաձոր համայնքի կարիքների համար նախագծանախահաշվային փաստաթղթերի կազմման աշխատանքների ձեռքբերման ՀՀ ԼՄՎՀ ԳՀԱՇՁԲ-25/55 ծածկագրով գնանշման հարցումով գնում կատարելու գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի հայտերի գնահատման նիստի

## заседания комиссии по оценке заявок процедуры закупок по запросу котировок для приобретения работ по проектно-сметной документации для нужд общины Ванадзор под кодом HH LMVH GHAShDzB-25/55

Գնահատող հանձնաժողովի նիստը տեղի ունեցավ 02 հունիսի 2025թ. ժամը 15:00-ին:

заседания Оценочной комиссии состоялось 02-ого июня 2025г. в 15:00.

Մասնակցում էին՝

**Հանձնաժողովի նախագահ**

Է. Սարիբեկյան

**Անդամներ**

Ա. Ստեփանյան, Մ. Պառավյան,

Ն. Եղիազարյան

**Գնումները համակարգող**

Վ. Վասիլյան

Принимали участие

Председатель комиссии: Э. Сарибекян

Члены комиссии: А. Степанян, М. Паравян,

Н. Егиазарян

Координатор по закупкам В. Василян

### 1. Ներկայացված հայտերում առկա անհամապատասխանությունների վերաբերյալ

### О несоответствиях в заявке, поданных на процедуру

1.1 Ներկայացված հայտերում հանձնաժողովի կողմից արձանագրվեցին հետևյալ անհամապատասխանությունները, ***որոնք անհրաժեշտ է սահմանված կարգով և ժամկետում շտկել:***

В представленных заявках комиссия зафиксировала следующие несоответствия, ***которые необходимо в установленном порядке и сроках исправить.***

| ԱՆՎԱՆՈՒՄԸ<br>НАИМЕНОВАНИЕ | Անհամապատասխանություններ<br>Несоответствия |
|---|---|
| «ՄԱԼԿ» ՍՊԸ<br>ООО “МАЛК” | Հայտում բացակայում են Հավելված 1.4-ի տեղեկատվության մեջ նշված մասնագետների հաստատած գրավոր համաձայնությունները՝ իրականացվելիք աշխատանքներում վերջիններիս ներգրավվելու մասին, ինչպես նաև հրավերով պահանջվող փաստաթղթերը (մասնագետների անձնագրերի և որակավորումը հավաստող փաստաթղթերի (դիպլոմ, վկայագիր, հավաստագիր և այլն):<br>В заявке отсутствуют письменные согласия, подтвержденные специалистами, указанными в информации, указанной в приложении 1.4, о привлечении последних к выполняемым работам, а также документы, требуемые по приглашению (паспорта специалистов и документы, подтверждающие квалификацию (диплом, сертификат, сертификат и т.д.). |
| «ԳԵՈՔԱՐՏ» ՍՊԸ<br>ООО “ ГЕОКАРТА” | Ներկայացված հայտում բացակայում են՝ նախկինում կատարած նմանատիպ պայմանագրի (պայմանագրերի, համաձայնագրերի) պատճենները, իսկ այդ պայմանագրի (պայմանագրերի, համաձայնագրերի) պատշաճ կատարումը գնահատելու համար՝ տվյալ պայմանագրի կողմերի հաստատած՝ պայմանագրի սահմանված ժամկետում կատարումը հավաստող ակտի (հանձման-ընդունման արձանագրություն և այլն) պատճենը կամ տվյալ պայմանագրի կատարումն ընդունած կողմի գրավոր հավաստումը:<br>В представленной заявке отсутствуют копии ранее заключенного аналогичного договора (договоров, соглашений), а для оценки надлежащего исполнения этого договора (договоров, соглашений)-копия акта (протокола сдачи-приемки и т.д.), подтверждающего исполнение договора в установленный срок, утвержденного сторонами данного договора, или письменное подтверждение стороны, принявшей исполнение данного договора.<br><br>Ներկայացված հայտում բացակայում է Հավելված 1.4-ը, ինչպես նաև հիմնական աշխատակազմում ներգրավված մասնագետների հաստատած գրավոր համաձայնությունները՝ իրականացվելիք աշխատանքներում վերջիններիս ներգրավվելու մասին, ինչպես նաև մասնագետների անձնագրերի և որակավորումը հավաստող փաստաթղթերի (դիպլոմ, վկայագիր, հավաստագիր և այլն) պատճենները:<br>В представленной заявке отсутствует приложение 1.4, а также письменные согласия, подтвержденные специалистами, задействованными в основном персонале, о привлечении последних к выполняемым работам, а |

| | |
|---|---|
| | также копии паспортов специалистов и документов, подтверждающих квалификацию (диплом, сертификат, сертификат и т.д.).<br><br>Ներկայացված հայտում բացակայում են համապատասխան լիցենզիաները:<br>В поданной заявке отсутствуют соответствующие лицензии.<br><br>Հավելված 1-ում իրական շահառուների կայքէջի հղումը հին տարբերակն է, անհրաժեշտ է տեղադրել վերջին թարմացված տարբերակը:<br>Ссылка на веб-сайт реальных бенефициаров в Приложении 1-старая версия, необходимо установить последнюю обновленную версию.<br><br>Հավելված 1-ում բացակայում է հետևյալ նախադասությունը՝<br>«Կից ներկայացվում է.<br>-որակավորման չափանիշներին համապատասխանությունը հիմնավորող՝ հրավերով նախատեսված փաստաթղթերը:»<br>В Приложении 1 отсутствует следующее предложение՝ Прилагается. -документы, предусмотренные приглашением, подтверждающие соответствие квалификационным критериям. |
| «Վանաձորի նախագծող» ՍՊԸ<br>ООО "Ванадзори нахагцох" | Հավելված 1-ում իրական շահառուների կայքէջի հղումը հին տարբերակն է, անհրաժեշտ է տեղադրել վերջին թարմացված տարբերակը:<br>Ссылка на веб-сайт о реальных бенефициаров в Приложении 1 старая версия необходимо установить последнюю обновленную версию.<br><br>Հիմնական աշխատակազմում ներգրավված մասնագետի՝ Նվեր Օհանյանի անձնագրի պատճենը բացակայում է:<br>Копия паспорта специалиста, задействованного в основном персонале, Нвера Оганяна, отсутствует.<br><br>Հրավերով պահանջվել է ջրամատակարարման և ջրահեռացման 2-րդ դասի լիցենզիա,հայտում կցված է 3-րդ դասի:<br>По приглашению была запрошена лицензия на водоснабжение и водоотведение 2-го класса,к заявке прилагается лицензия 3-го класса.<br><br>Հրավերով պահանջվել է 2-րդ դասի կոնստրուկտորի հավաստագիր,հայտում բացակայում է:<br>По приглашению был запрошен сертификат конструктора 2-го класса,в заявке отсутствует. |
| «Օհանյան Ինդասթրիզ» ՍՊԸ<br>ООО "Оганян Индастриз" | Ներկայացված հայտում բացակայում է Հավելված 1.4-ը, ինչպես նաև հիմնական աշխատակազմում ներգրաված մասնագետների հաստատած գրավոր համաձայնությունները՝ իրականացվելիք աշխատանքներում վերջիններիս ներգրավվելու մասին, ինչպես նաև մասնագետների անձնագրերի և որակավորումը հավաստող փաստաթղթերի (դիպլոմ, վկայագիր, հավաստագիր և այլն) պատճենները:<br>В представленной заявке отсутствует приложение 1.4, а также письменные согласия, подтвержденные специалистами, задействованными в основном персонале, о привлечении последних к выполняемым работам, а также копии паспортов специалистов и документов, подтверждающих квалификацию (диплом, сертификат, сертификат и т.д.).<br><br>Նմանատիպ պայմանագրի էլեկտրոնային ֆայլը էլեկտրոնային ստորագրությամբ հաստատված չէ:<br>Электронный файл аналогичного договора не заверен электронной подписью.<br><br>Լիցենզիայի էլեկտրոնային ֆայլը էլեկտրոնային ստորագրությամբ հաստատված չէ:<br>Электронный файл лицензии не заверен электронной подписью. |
| «ՄԻԿՊՐՈ» ՍՊԸ<br>ООО "МИКПРО" | Ներկայացված հայտում բացակայում են՝ նախկինում կատարած նմանատիպ պայմանագրի (պայմանագրերի, համաձայնագրերի) պատճենները, իսկ այդ պայմանագրի (պայմանագրերի, համաձայնագրերի) պատշաճ կատարումը գնահատելու համար՝ տվյալ պայմանագրի կողմերի հաստատած՝ պայմանագրի սահմանված ժամկետում կատարումը հավաստող ակտի (հանձման-ընդունման արձանագրություն և այլն) պատճենը կամ տվյալ պայմանագրի կատարումն ընդունած կողմի գրավոր հավաստումը:<br>В представленной заявке отсутствуют копии ранее заключенного аналогичного договора (договоров, соглашений), а для оценки надлежащего исполнения этого договора (договоров, соглашений)-копия акта (протокола сдачи-приемки и т.д.), подтверждающего исполнение договора в установленный срок, утвержденного сторонами данного договора, или письменное подтверждение стороны, принявшей исполнение данного договора.<br><br>Ներկայացված հայտում բացակայում է համապատասխան լիցենզիան:<br>В поданной заявке отсутствует соответствующая лицензия.<br><br>Հրավերով նաև պահանջվել է 2-րդ դասի կոնստրուկտորի հավաստագիր,հայտում բացակայում է: |

| | |
|---|---|
| | По приглашению также был запрошен сертификат конструктора 2-го класса,в заявке отсутствует. |
| «ԷԼԵԿՇԻՆ» ՍՊԸ<br>ООО " ЭЛЕКШИН " | Նմանատիպ պայմանագրերի էլեկտրոնային ֆայլերը էլեկտրոնային ստորագրությամբ հաստատված չէ:<br>Электронные файлы аналогичных договоров не заверены электронной подписью.<br><br>Լիցենզիայի էլեկտրոնային ֆայլը էլեկտրոնային ստորագրությամբ հաստատված չէ:<br>Электронный файл лицензии не заверен электронной подписью. |
| «Արք. Պրոեկտ» ՍՊԸ<br>ООО "Арк. Проект" | Նմանատիպ պայմանագրի էլեկտրոնային ֆայլը էլեկտրոնային ստորագրությամբ հաստատված չէ:<br>Электронный файл аналогичного договора не заверен электронной подписью.<br><br>10-րդ չափաբաժնի համար կցված չէ նմանատիպ պայմանագիր:<br>Для 10 лота не прилагается аналогичный контракт.<br><br>Հիմնական աշխատակազմում ներգրավված մասնագետներ՝ Տիգրան Առաքելյանի,Արշավիր Հլղաթյանի,Միքայել Շարոյանի աշխատանքային փորձի ժամանակահատվածները,որոնք նշված են Հավելված 1.4-ում, չեն համապատասխանում հրավերի պահանջին:<br>Периоды стажа работы специалистов,задействованных в основном персонале-Тиграна Аракеляна,Аршавира Глатяна, Микаэла Шарояна, указанные в приложении 1.4, не соответствуют требованиям приглашения.<br><br>Հրավերով նաև պահանջվել է 2-րդ դասի կոնստրուկտորի հավաստագիր,որը հայտում բացակայում է:<br>По приглашению также был запрошен сертификат конструктора 2-го класса, который отсутствует в заявке. |

Հարկ է նշել,որ մասնակցի կողմից ներկայացված հայտում ոչ գնային պայմանների բացակայությունը չի հանդիսանում հայտի մերժման հիմք, ոչ գնային պայմաններին տրված գնահատականը ազդում է մասնակիցներին տրվող ընդհանուր գնահատականի վրա:

Եթե մասնակցի կողմից ներկայացված ոչ գնային պայմանները բավարարող փաստաթղթերում արձանագրվում են անհամապատասխանություններ՝ հրավերի պահանջների նկատմամբ, ապա հանձնաժողովը մեկ աշխատանքային օրով կասեցնում է նիստը, իսկ հանձնաժողովի քարտուղարը նույն օրը դրա մասին համակարգի միջոցով տեղեկացնում է մասնակցին՝ առաջարկելով մեկ աշխատանքային օրվա ընթացքում շտկել անհամապատասխանությունը:

Մասնակիցը ոչ գնային պայմաններից որևէ մեկին չհամապատասխանելու դեպքում՝ ներկայացնում է տեղեկատվություն հրավերի 2.4 կետով սահմանված որակավորման փաստաթղթերի բացակայության մասին:

Стоит отметить, что отсутствие неценовых условий в заявке, представленной участником, не является основанием для отклонения заявки, оценка неценовых условий влияет на общую оценку, предоставленную участникам.

Если оценочная комиссия в представленных участниками документах, соответствующие неценовым условиям, фиксирует несоответствия требованиям приглашения, то комиссия приостанавливает заседание на один рабочий день, а секретарь комиссии в тот же день уведомляет об этом участника посредством системы, предлагая исправить несоответствие в течение одного рабочего дня.

В случае несоответствия ни одному из неценовых условий участник представляет информацию об отсутствии квалификационных документов, установленных пунктом 2.4 приглашения.

Ընդունվել է որոշում՝ կողմ -4, դեմ- 0

Было принято решение: за-4, против-0.

## <u>2.Գնահատող հանձնաժողովի որոշման մասին</u>

## <u>О решении оценочной комиссия</u>

«ՀՀ ԼՄՎՀ ԳՀԱՇՁԲ-25/55» ծածկագրով ընթացակարգի գնահատող հանձնաժողովը որոշեց.

Оценочной комиссия процедуры запроса котировок под кодом **HH LMVH GHAShDzB-25/55** решила:

2.1 Մեկ աշխատանքային օրով կասեցնել նիստը՝ առաջարկելով սույն արձանագրության 1.1 ենթակետում նշված մասնակիցներին սահմանված կարգով և ժամկետում **<u>մեկ աշխատանքային օրվա ընթացքում</u>** շտկել անհամապատասխանությունները:

Приостановить заседание на один рабочий день и предложить участникам, упомянутые в подпункте 1.1 протокола исправить зафиксированное несоответствия в установленном порядке и сроках **<u>в течение одного рабочего дня.</u>**

2.2 Հաջորդ նիստը կկայանա ոչ ուշ քան հայտերի ներկայացման վերջնաժամկետը լրանալու օրվանից հաշված տասնհինգ աշխատանքային օրվա ընթացքում, հասցեն՝ ք. Վանաձոր, Տիգրան Մեծի 22 հասցեում, 311 սենյակում:

Следующее заседание комиссии состоится не позднее чем в течение пятнадцати рабочих дней со дня истечения срока подачи заявок, по адресу г. Ванадзор, пр. Тиграна Меца 22, кабинет 311.

Ընդունվել է որոշում՝ կողմ - 4, դեմ – 0:
Было принято решение: за-4, против-0.

| | |
|---|---|
| Գնահատող հանձնաժողովի նախագահ՝<br>Председатель комиссии | ________ Էդգար Սարիբեկյան /Эдгар Сарибекян/ |
| հանձնաժողովի անդամներ՝<br>Члены комиссии | ________ Արմեն Ստեփանյան /Армен Степанян/ |
| | ________ Միհրան Պառավյան /Мигран Паравян/ |
| | ________ Նոնա Եղիազարյան /Нона Егиазарян/ |
| | ________ Արեն Մկրտչյան /Арен Мкртчян/ |
| Գնումները համակարգող՝<br>Координатор по закупкам | ________ Վեներա Վասիլյան /Венера Василян/ |